«Տնտեսական ազատության ինդեքս- 2015»

ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների[1]

«Հերիթիջ» հիմնադրամը, «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2015թ. հունվարի 27-ին հրապարակել է 178 երկրների համար 2015 թ.-ի տնտեսական ազատության ինդեքսները[2]: Տնտեսական ազատության ինդեքսը գնահատվում է ըստ 10 գործոնների: Դրանք են՝ **սեփականության իրավունքի պաշտպանությունը, կոռուպցիայից ազատությունը, հարկաբյուջետային ազատությունը, կառավարության ծախսումները, գործարարության ազատությունը, աշխատանքի ազատությունը, դրամավարկային ազատությունը, առևտրի ազատությունը, ներդրումների ազատությունը և ֆինանսական ազատությունը:** Այդ ինդեքսի գնահատման համար կիրառվում է 0-ից մինչև 100 միավոր գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին:

Բացի այդ, «Հերիթիջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է ըստ հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես **«ազատ»**, 70.0-79.9%՝ **«հիմնականում ազատ»**, 60.0-69.9%՝ **«չափավոր ազատ»**, 50.0-59.9%՝ **«հիմնականում ոչ ազատ»**, 50%-ից ցածր՝ **«ճնշված»** երկրներ:

2015 թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2015թ. **դրամավարկային ազատություն** գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2011-2013թթ. միջին կշռված տարեկան գնաճը, մինչդեռ, որպես հարկավորման ցուցանիշ վերցվել են 2014 թ. հարկային տարվա հարկային դրույքները:

Հայաստանի գնահատականները. «**Տնտեսական ազատության ինդեքս 2015»** հետազոտությունում Հայաստանի դիրքը վատացել է և աշխարհի 178 երկրների շարքում Հայաստանը ներկայումս գրավում է 52-րդ տեղը՝ նախորդ տարվա 41-րդ տեղի փոխարեն: Տնտեսական ազատության Հայաստանի գնահատականը (67.1 միավոր) բարձր է համաշխարհային միջինից (60.4 միավոր):

2014թ.-ի համեմատ բարելավվել են **կոռուպցիայից ազատության** (9.3 միավորով)**, կառավարության ծախսումների** (1.5 միավորով) և **ներդրումների ազատության** (5.0 միավորով) գնահատականները, վատացել են **սեփականության իրավունքի պաշտպանության** (10.0 միավորով)**, հարկաբյուջետային ազատության** (2.1 միավորով), **գործարարության ազատության** (0.4 միավորով), **աշխատանքի ազատության** (14.2 միավորով), **դրամավարկային ազատության** (6.4 միավորով) և **առևտրի ազատության** (0.1 միավորով)

---

[1] ***Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, 2015.< http://www.heritage.org/index/>*

[2] *2015թ. ինդեքսում դիտարկվել են 186 երկրներ, սակայն դրանցից միայն 178 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար տվյալների պատճառով Աֆղանստանի, Իրաքի, Կոսովոյի, Լիբիայի, Սոմալիի, Սուդանի, Սիրիայի և Լիխտենշտեյնի համար համախառն ինդեքսի գնահատական և, հետևաբար նաև, երկրի դիրք չի սահմանվել:*

գնահատականները: Անփոփոխ է մնացել միայն **ֆինանսական ազատության** գնահատականը: Վերոնշյալ գործոններում կատարված փոփոխությունների արդյունքում Հայաստանի 2015թ.-ի տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.8 միավորով (տե՛ս աղյուսակ 1):

Ներկայացնենք «**Տնտեսական ազատության ինդեքս 2015»** հետազոտությունում դիտարկվող առանձին գործոնների վարքագիծը: Մասնավորապես,

- **«Սեփականության իրավունքի պաշտպանության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 10.0 միավորով և կազմել 20.0 միավոր: Ըստ «Հերիթիջի» մեթոդաբանության, 20 միավոր տրվում է երկրին, երբ «Մասնավոր սեփականությունը թույլ է պաշտպանված: Դատական համակարգն այնքան անարդյունավետ է և կոռումպացված, որ արտադատարանական լուծումներն ու արբիտրաժը տարածված բնույթ են կրում: Սեփականության իրավունքը դժվարությամբ է պաշտպանվում: Դատական համակարգում կոռուպցիան, ինչպես նաև բռնագրավման դեպքերը տարածված են»[3]:
- **«Կոռուպցիայից ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 9.3 միավորով և կազմել 36.0 միավոր: Այս գործոնի գծով երկրների գնահատականները «Հերիթիջը» վերցրել է **«Թրանսփերենսի ինթերնեյշնլ»** կազմակերպության **«Կոռուպցիայի ընկալման 2013թ. ինդեքս»** զեկույցից, որում Հայաստանի գնահատականը կազմում էր 36.0 միավոր:
- **«Հարկաբյուջետային ազատության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 2.1 միավորով և կազմել 84.4 միավոր: Նկատենք, որ հարկաբյուջետային ազատությունը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշռի ցուցանիշը: 2015թ.-ի զեկույցում ընդհանուր հարկային բեռի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ աճել է 5.3%-ով և կազմել 22.0%, որի պատճառով էլ Հայաստանի հարկաբյուջետային ազատության գնահատականը վատացել է:
- **«Կառավարության ծախսումներ»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 1.5 միավորով և կազմել 82.8 միավոր: Կառավարության ծախսումները ՀՆԱ-ում 2014թ.-ին նվազել են 1.1%-ով և կազմել 23.9%. որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը այս գործոնի գծով բարելավվել է:
- **«Գործարարության ազատության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 0.4 միավորով և կազմել 82.7 միավոր՝ չնայած այն հանգամանքին, որ «Հերիթիջի» փորձագետները արդյունավետ են գնահատում Հայաստանում գործարարության կանոնակարգման դաշտը: Բանն այն է, որ «Գործարարության ազատություն» գործոնի ցուցանիշները «Հերիթիջի» փորձագետները վերցնում են Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** հետազոտությունից, որի 2015թ. զեկույցում Հայաստանի բոլոր այն ցուցանիշները, որոնք օգտագործվում են «Հերիթիջի» փորձագետների կողմից, մնացել են անփոփոխ[4]: Սակայն,

---

[3] *Աղբյուրը՝* ***Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 475-476:*

[4] *Այս գործոնի գնահատման համար Համաշխարհային բանկի «****Գործարարության դյուրինություն 2015****» զեկույցից վերցրել են՝ ա)****գործարարություն սկսելու*** *համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի, ծախքի և նվազագույն կապիտալի ցուցանիշները,*

ըստ մեթոդաբանության, երկրների «Գործարարության ազատություն» գործոնը գնահատելիս «Հերիթիջը» առանձին երկրների ցուցանիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով բոլոր երկրների միջինի հետ: Փաստորեն, «Գործարարության ազատություն» գործոնի հաշվարկման հիմքում ընկած Հայաստանի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ չեն վատացել, սակայն այդ ցուցանիշների գծով համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը վատացել է:

- **«Աշխատանքի ազատություն»** գործոնի գնահատականը **նախորդ տարվա համեմատ վատացել է 14.2 միավորով** և կազմել 64.3 միավոր: Ընդ որում, Հայաստանի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում այս ենթաինդեքսի գծով վատացել է 41 տեղով: Բանն այն է, որ «Աշխատանքի ազատություն» գործոնի ցուցանիշները նույնպես «Հերիթիջի» փորձագետները վերցնում են Համաշխարհային բանկի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»** հետազոտությունից: Ընդ որում, օգտագործվող ցուցանիշների մի մասը հարցումների արդյունք են, իսկ մյուս մասը վերցվում են տվյալ երկրի պաշտոնական աղբյուրներից: «**Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը**» 2014թ. և 2015թ. զեկույցներում այս գործոնի գնահատման նպատակով օգտագործվող հարցումների արդյունքների և ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք մնացել են անփոփոխ: Սակայն, նկատի ունենալով, որ երկրների «**Աշխատանքի ազատություն**» գործոնը գնահատելիս «Հերիթիջը» առանձին երկրների ցուցանիշները համեմատում է այդ ցուցանիշի գծով բոլոր դիտարկվող երկրների միջինի հետ, գալիս ենք եզրահանգման, որ թեև «**Աշխատանքի ազատություն**» գործոնի հաշվարկման հիմքում ընկած Հայաստանի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ չեն վատացել, սակայն այդ ցուցանիշների գծով համաշխարհային միջինն է բարելավվել, որի պատճառով էլ Հայաստանը հետընթաց է արձանագրել:

- **«Դրամավարկային ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 6.4 միավորով և կազմել 70.6 միավոր: Ընդ որում, Հայաստանի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում այս ենթաինդեքսի գծով վատացել է 71 տեղով[5]: Այս գործոնի գնահատականի վատացումը պայմանավորվել է 2011-2013թթ. Հայաստանում գրանցված միջին կշռված տարեկան գնաճի բարձր՝ 5.17% մակարդակով: Վերջինս **դրամավարկային ազատություն** գործոնի 2015թ. գնահատականի հիմքում դրված ցուցանիշներից մեկն է: Ընդ որում, հաշվարկն իրականացվել է հետևյալ կերպ. 2011թ.-ի գնաճին, որը կազմել է 7.65% տրվել է ցածր՝ 0.09 կշիռ, իսկ 2012թ. և 2013թ. գնաճերին, որոնք կազմել են 2.6% և 5.786%, տրվել են մեծ կշիռներ՝ համապատասխանաբար 0.245 և 0.665: Միևնույն ժամանակ նկատենք, որ **դրամավարկային ազատություն** գործոնի հիմքում դրվող մյուս՝ երկրում **կարգավորվող գների մակարդակը** բնութագրող ցուցանիշի պատճառով, ի տարբերություն նախորդ տարիների, երբ Հայաստանի դրամավարկային ազատության գնահատականը նվազեցվում էր 10.0 տուգանային միավորով, այս տարվա զեկույցում այն նվազեցվել է 15.0 միավորով: Այս կապակցությամբ «Հերիթիջի» փորձագետները նշել են, որ «կառավարության սուբսիդիաները խեղաթյուրում են գները հանրային տրանսպորտի, էլեկտրաէներգիայի և գազի հատվածներում»[6]: Արդյունքում **դրամավարկային**

---

*բ)**շինարարական թույլտվություններ ստանալու** համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախքի ցուցանիշները,*
*գ)**անվճարունակության պատճառով լուծարման** դեպքում անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և փոխհատուցման չափի ցուցանիշները:*

[5] *Նախորդ տարի Հայաստանի դիրքը «**Դրամավարկային ազատություն**» գործոնի գծով բարելավվել էր 42 տեղով:*

[6] *Աղբյուրը՝ **Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom**/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 105:*

ազատության գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 6.4 միավորով: Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ հաջորդ տարվա՝ **2016թ. Տնտեսական ազատության** ինդեքսում «**Դրամավարկային ազատություն**» գործոնի գնահատականը կբարելավվի շուրջ 2.33 միավորով՝ պայմանավորված 2014թ. ցածր գնաճով (2.98%):

- **«Առևտրի ազատություն»** գործոնի գնահատական նախորդ տարվա համեմատ վատացել է 0.1 միավորով՝ ի հաշիվ դրա հաշվարկման հիմքում ընկած արտաքին առևտրի միջին տարիֆի (2.25%) տասնորդականի ճշգրտությամբ կլորացման (2.3%):
- **«Ներդրումների ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 5.0 միավորով և կազմել 75 միավոր: Այս գործոնի գծով Հայաստանի գնահատականի փոփոխությունը հնարավոր չէ բացատրել, քանի որ «Հերիթիջի» փորձագետները իրենց զեկույցում չեն մանրամասնեցնում յուրաքանչյուր առանձին երկրի գնահատականի հիմքում դրված իրենց դատողությունները: Թերևս, հարկ կլինի այս գործոնի գնահատականը պարզել «Հերիթիջի» հետ գրագրությունների արդյունքում:
- **«Ֆինանսական ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոխվել և կազմել է 70.0 միավոր: Ըստ «Հերիթիջի» մեթոդաբանության, 20 միավոր տրվում է երկրին, որտեղ կառավարության ազդեցությունը ֆինանսական համակարգի գործունեությանը սահմանափակ բնույթ է կրում: «Վարկերի տեղաբաշխման ժամանակ զգացվում է կառավարության ազդեցությունը, և վարկերի մասնավոր տեղաբաշխման առնչությամբ սահմանափակումներ գրեթե չկան: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների համար գործում եմ մի քանի սահմանափակումներ:»:

Նկատենք, որ Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի շուրջ 20 տարիների պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսական ազատությունը Հայաստանում բարելավվել է 24.9 միավորով՝ 1996թ.-ի 42.2 միավորից 2015թ.-ին հասնելով 67.1 միավորի: Այս տարիների ընթացքում Հայաստանում գրանցվել են տնտեսական ազատության 10 գործոններից 8-ի բարելավում, որոնց թվում են՝ **դրամավարկային ազատությունը**, **պետական ֆինանսների կառավարումը**, **առևտրի ազատությունը** և **ֆինանսական ազատությունը**: Հետընթաց է արձանագրվել միայն **«Սեփականության իրավունքի պաշտպանության**» և «**Կոռուպցիայից ազատության**» գործոնների գծով: Հայաստանը տնտեսապես «ճնշված» երկրից այսօր դարձել է տնտեսապես «չափավոր ազատ»: «Համաշխարհային առևտրի նկատմամբ բացվածությունը և գործարար ակտիվությունը խթանող կանոնակարգային բարեփոխումները հեշտացրել են Հայաստանի անցումը դեպի առավել դինամիկ և շուկայական կողմնորոշում ունեցող տնտեսության: Սակայն երկարաժամկետ տնտեսական զարգացում ապահովելու համար անհրաժեշտ են շարունակական ջանքեր ուղղված, հատկապես, դատական համակարգի անկախության ամրապնդմանը և կոռուպցիան արմատախիլ անելուն»[7]:

Այժմ դիտարկենք ենթաինդեքսները **օրենքի գերակայության**, **կառավարության չափի**, **կարգավորման դաշտի արդյունավետության** և **բաց շուկաների** տեսանկյունից:

Օրենքի գերակայության տեսանկյունից գնահատվում են **«Սեփականության իրավունքի պաշտպանության**» և «**Կոռուպցիայից ազատության»** ենթաինդեքսները, որոնց գծով Հայաստանը աշխարհի 178 երկրների շարքում գրավում է համապատասխանաբար 138-րդ և 95-

[7] *Աղբյուրը՝* ***Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 106:*

րդ տեղերը: Այս երկու գործոնների գնահատականներն էլ **ցածր են** համաշխարհային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Դատական համակարգը, ծանրաբեռնված կոռուպցիայով, խոչընդոտում է պայմանագրերի կիրարկումը: Օրենքի գերակայության գնահատականը ցածր է միջինից»[8]:

Կառավարության չափի տեսանկյունից գնահատվում են **«Հարկաբյուջետային ազատության»** և **«Կառավարության ծախսումներ»** ենթաինդեքսները, որոնց գծով Հայաստանը աշխարհի 178 երկրների շարքում գրավում է համապատասխանաբար 54-րդ և 39-րդ տեղերը: Այս գործոնների գնահատականները **բարձր են** համաշխարհային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Եկամտային հարկի առավելագույն դրույքը 26% է, իսկ շահութահարկի առավելագույն դրույքը՝ 20%: Մյուս հարկերը ներառում են ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը: Հարկային ընդհանուր բեռը կազմում է ՀՆԱ-ի 22.0%-ը: Կառավարության ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 24.0%-ը և պետական պարտքը վերջին տարիներին հասել է ՀՆԱ-ի շուրջ 42%-ին»[9]:

Կարգավորման դաշտի արդյունավետության տեսանկյունից գնահատվում են **«Գործարարության ազատության»**, **«Աշխատանքի ազատության»** և **«Դրամավարկային ազատության»** ենթաինդեքսները, որոնց գծով Հայաստանը աշխարհի 178 երկրների շարքում գրավում է համապատասխանաբար 25-րդ, 76-րդ և 144-րդ տեղերը: Առաջին երկու՝ **«Գործարարության ազատության»** և **«Աշխատանքի ազատության»** գործոնների գնահատականները **բարձր են** համաշխարհային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Վերջին տարիներին գործարար միջավայրի կարգավորման ոլորտում մի շարք բարեփոխումներ են իրականացվել: Սկսնակ գործարարների համար նվազագույն կապիտալի պահանջը վերացվել է և սնանկացման գործընթացները արդիականացվել են: Աշխատուժի ոչ-աշխատավարձային ծախքը չափավոր է, սակայն ոչ ֆորմալ աշխատուժի շուկան ծավալուն է: Կառավարության աճող սուբսիդիաները խեղաթյուրում են գները հանրային տրանսպորտի, էլեկտրաէներգիայի և գազի հատվածներում»[10]:

Բաց շուկաների տեսանկյունից գնահատվում են **«Առևտրի ազատության»**, **«Ներդրումների ազատության»** և **«Ֆինանսական ազատության»** ենթաինդեքսները, որոնց գծով Հայաստանը աշխարհի 178 երկրների շարքում գրավում է համապատասխանաբար 48-րդ, 36-րդ և 19-րդ տեղերը: Այս գործոնների գնահատականները նույնպես **բարձր են** համաշխարհային և տարածաշրջանային միջիններից: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, «Առևտրի ծավալներով կշռված միջին տարիֆը Հայաստանում կազմում է 2.3% և ոչ-տարիֆային խոչընդոտները համեմատաբար ցածր են, սակայն առկա են առևտրին և օտարերկրյա ներդրումներին խոչընդոտող բյուրոկրատական արգելքներ: Հողի սեփականությունը հիմնականում պատկանում է տեղական ներդրողներին: Պետությունը այլևս բաժնեմաս չունի որևէ բանկում, սակայն բանկային հատվածը, որին պատկանում է ֆինանսական հատվածի ընդհանուր ակտիվների ավելի քան 90%-ը, դեռևս պայքարում է ադեկվատ երկարաժամկետ վարկեր և բարդ ֆինանսական ծառայություններ մատուցելու համար»[11]:

---

[8] *Նույն տեղում, էջ 106:*

[9] *Աղբյուրը՝* ***Promoting Economic Opportunity & Prosperity: The 2015 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 106:*

[10] *Նույն տեղում, էջ 106*:

[11] *Նույն տեղում, էջ 106:*

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «**չափավոր ազատ**» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 1):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է մերձբալթյան երկրներին, Վրաստանին, Չեխիային, Լեհաստանին և Սլովակիային (տե՛ս աղյուսակ 2):

Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում Հայաստանը ներկայումս գրավում է 23-րդ տեղը, իսկ Վրաստանը զբաղեցնում է 11-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 3): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (67.1 միավոր) բարձր է եվրոպական տարածաշրջանի միջինից (67.0 միավոր):

Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների շարքին են դասվում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ Չեխիայի, որը «**հիմնականում ազատ**» երկիր է և Բոսնիա-Հերցեգովինայի, որը ներկայումս դասվում է «**հիմնականում ոչ ազատ**» երկրների թվին: Տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների թվին են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Լատվիան, Ղազախստանը, Ղրղզստանը և Ադրբեջանը (տե՛ս աղյուսակ 2): Նկատենք, որ, համաձայն «Հերիթիջի» գնահատականների, Բոսնիա-Հերցոգովինան, Մոլդովան, Տաջիկստանը, Ռուսաստանն ու համարվում են «**հիմնականում ոչ ազատ**», իսկ Բելառուսը, Ուզբեկստանը, Ուկրաինան և Թուրքմենստանը՝ «**ճնշված**» երկրներ:

«**Հերիթիջ**» հիմնադրամի «**Տնտեսական ազատության ինդեքս 2015**» զեկույցում երկրների առաջին տասնյակում են Հոնկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Շվեյցարիան, Կանադան, Չիլին, Էստոնիան, Իռլանդիան և Մավրիտանիան, իսկ վերջին տասնյակում՝ Արգենտինա, Կոնգոյի հանրապետությունը, Իրանը, Թուրքմենստանը, Գվինեա, Էրիթրեան, Վենեսուելան, Զիմբաբվեն, Կուբան և Հյուսիսային Կորեան:

Կից աղյուսակների տեսքով ներկայացվում են Հայաստանի 1996-2015թթ., նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև ողջ եվրոպական տարածաշրջանի երկրների 2015թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները՝ ըստ «Հերիթիջ» հիմնադրամի:

Հայաստանի «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (1996-2015 թթ.) [12]

Աղյուսակ 1.

	2015	2014	13	12	11	10	09	08	07	06	05	04	03	02	01	2000	1999	1998	1997	1996
Երկրների թիվը	178/186 [13]	178/186	177/185	184	183	183	179	157	157	157	155	155	157	157	155	161	161	156	150	142
Երկրի դիրքը	52	41	38	39	36	38	31	30	34	27	25	23	37	32	46	62	97	117	123	125
«Տնտեսական ազատության ինդեքսը»	67.1	68.9	69.4	68.8	69.7	69.2	69.9	69.9	68.6	70.6	69.8	70.3	67.3	68.0	66.4	63.0	56.4	49.6	46.7	42.2
Սեփականության իրավունքը	20.0	30.0	30.0	30.0	30.0	30.0	35.0	35.0	30.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
Կոռուպցիայից ազատությունը	36.0	26.7	26.0	26.0	27.0	29.0	30.0	29.0	29.0	31.0	30.0	25.0	25.0	25.0	30.0	30.0	30.0	30.0	30.0	50.0
Հարկաբյուջետային ազատությունը	84.4	86.5	88.0	89.3	89.2	89.3	90.0	89.0	89.7	90.0	89.9	90.0	88.9	88.3	81.9	79.3	80.3	80.9	80.7	75.8
Կառավարության ծախսումները	82.8	81.3	82.1	74.9	85.7	90.9	89.7	86.4	90.8	90.7	88.9	88.7	84.1	81.3	85.5	86.8	82.1	75.1	41.7	0.0
Գործարարության ազատությունը	82.7	83.1	87.6	87.8	82.4	83.4	83.7	81.3	80.8	77.6	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0	55.0
Աշխատանքի ազատությունը	64.3	78.5	77.1	76.6	75.9	70.6	66.3	68.2	70.3	65.3	62.1	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A
Դրամավարկային ազատությունը	70.6	77.0	73.0	73.1	76.0	72.9	77.8	84.6	80.3	80.6	82.0	84.5	81.7	91.1	77.8	69.1	55.5	0.0	0.0	0.0
Առևտրի ազատությունը	85.4	85.5	85.4	85.4	85.5	80.5	86.4	85.0	85.6	80.6	80.0	80.0	81.2	81.4	77.0	77.0	75.0	75.0	83.0	69.0

[12] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 1996-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ տարբեր տարիներին Հայաստանի դիրքի փոփոխության:
Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:
[13] 2015թ. ինդեքսում դիտարկվել են 186 երկրներ, սակայն դրանցից միայն 178 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար տվյալների պատճառով Աֆղանստանի, Իրաքի, Կոսովոյի, Լիբիայի, Սոմալիի, Սուդանի, Սիրիայի և Լիխտենշտեյնի համար համախառն ինդեքսի գնահատական և, հետևաբար նաև, երկրի դիրք չի սահմանվել:

Ներդրումների ազատությունը	75.0	70.0	75.0	75.0	75.0	75.0	70.0	70.0	60.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	50.0	30.0	30.0	30.0	30.0
Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	70.0	90.0	90.0	70.0	70.0	70.0	70.0	50.0	50.0	50.0	50.0

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների

«Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների

(2015 թվական)

Աղյուսակ 2

Երկրի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում	Երկիր	Գնահատականներ								2015 թ. գնահատականն ըստ առանձին գործոնների									
		2015	2014	13	12	11	10	09	08	Սեփականության իրավունքի պաշտպանվածություն	Կոռուպցիայի ազատություն	Հարկային բեռ	Պետական ծախսեր	Ձեռնարկատիրական ազատություն	Աշխատանքի ազատություն	Դրամավարկային քաղաքականության ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն
8	Էստոնիա	76.8	75.9	75.3	73.2	75.2	74.7	76.4	77.9	90.0	68.0	80.6	53.2	81.5	58.7	77.6	88.0	90.0	80.0
15	Լիտվա	74.7	73.0	72.1	71.5	71.3	70.3	70	70.9	60.0	57.0	92.9	61.3	84.9	62.0	81.2	88.0	80.0	80.0
22	Վրաստան	73.0	72.6	72.2	69.4	70.4	70.4	69.8	69.2	40.0	49.0	87.2	73.8	88.6	79.9	82.7	88.6	80.0	60.0
24	Չեխիա	72.5	72.2	70.9	69.9	70.4	69.8	69.4	68.1	75.0	48.0	81.5	40.6	68.2	82.9	81.2	88.0	80.0	80.0
37	Լատվիա	69.7	68.7	66.5	65.2	65.8	66.2	66.6	68.3	50.0	53.0	84.4	59.2	82.1	61.5	83.8	88.0	85.0	50.0
42	Լեհաստան	68.6	67.0	66.0	64.2	64.1	63.2	60.3	60.3	60.0	60.0	82.1	47.1	67.3	60.4	81.3	88.0	70.0	70.0
50	Սլովակիա	67.2	66.4	68.7	67	69.5	69.7	69.4	70	50.0	47.0	80.8	55.1	69.6	56.5	75.5	88.0	80.0	70.0
52	Հայաստան	67.1	68.9	69.4	68.8	69.7	69.2	69.9	69.9	20.0	36.0	84.4	82.8	82.7	64.3	70.6	85.4	75.0	70.0
53	Մակեդոնիա	67.1	68.6	68.2	68.5	66	65.7	61.2	61.1	35.0	44.0	91.4	65.6	79.2	70.7	79.0	86.2	60.0	60.0
54	Հունգարիա	66.8	67.0	67.3	67.1	66.6	66.1	66.8	67.6	55.0	54.0	78.7	25.9	74.5	67.7	79.2	88.0	75.0	70.0
55	Բուլղարիա	66.8	65.7	65.0	64.7	64.9	62.3	64.6	63.7	30.0	41.0	91.0	64.5	68.5	76.6	83.2	88.0	65.0	60.0
57	Ռումինիա	66.6	65.5	65.1	64.4	64.7	64.2	63.2	61.7	40.0	43.0	86.9	62.3	69.8	68.6	77.3	88.0	80.0	50.0
63	Ալբանիա	65.7	66.9	65.2	65.1	64.0	66.0	63.7	62.4	30.0	31.0	87.2	76.1	70.6	52.9	80.8	87.8	70.0	70.0
66	Մոնտենեգրո	64.7	63.6	62.6	62.5	62.5	63.6	58.2	N/A	40.0	44.0	92.6	36.7	77.1	77.5	79.7	84.8	65.0	50.0

69	Ղազախստան	**63.3**	**63.7**	**63.0**	**63.6**	**62.1**	**61**	**60.1**	**61.1**	25.0	26.0	93.2	85.0	73.7	87.0	74.6	79.0	40.0	50.0
81	Խորվաթիա	**61.5**	**60.4**	**61.3**	**60.9**	**61.1**	**59.2**	**55.1**	**54.1**	40.0	48.0	74.9	46.5	55.8	42.8	80.0	87.2	80.0	60.0
82	Ղրղզստան	**61.3**	**61.1**	**59.6**	**60.2**	**61.1**	**61.3**	**61.8**	**61.1**	20.0	24.0	93.6	53.2	73.7	85.0	73.8	80.2	60.0	50.0
85	Ադրբեջան	**61.0**	**61.3**	**59.7**	**58.9**	**59.7**	**58.8**	**58.0**	**55.3**	20.0	28.0	88.1	59.7	74.5	79.1	79.8	76.0	55.0	50.0
88	Սլովենիա	**60.3**	**62.7**	**61.7**	**62.9**	**64.6**	**64.7**	**62.9**	**60.2**	60.0	57.0	58.1	0.0	81.2	57.1	81.3	88.0	70.0	50.0
90	Սերբիա	**60.0**	**59.4**	**58.6**	**58.0**	**58.0**	**56.9**	**56.6**	**N/A**	45.0	42.0	82.4	27.1	57.8	70.4	72.2	78.2	75.0	50.0
97	Բոսնիա-Հերց.	**59.0**	**58.4**	**57.3**	**57.3**	**57.5**	**56.2**	**53.1**	**53.9**	20.0	42.0	82.9	27.3	53.5	63.4	84.0	87.2	70.0	60.0
111	Մոլդովա	**57.5**	**57.3**	**55.5**	**54.4**	**55.7**	**53.7**	**54.9**	**57.9**	40.0	35.0	85.1	51.8	66.8	40.6	76.1	79.8	50.0	50.0
140	Տաջիկստան	**52.7**	**52.0**	**53.4**	**53.4**	**53.5**	**53**	**54.6**	**54.4**	20.0	22.0	92.1	81.9	65.4	46.4	69.6	74.6	25.0	30.0
143	Ռուսաստան	**52.1**	**51.9**	**51.1**	**50.5**	**50.5**	**50.3**	**50.8**	**49.8**	20.0	28.0	86.1	57.8	76.3	58.9	63.9	75.0	25.0	30.0
153	Բելառուս	**49.8**	**50.1**	**48.0**	**49.0**	**47.9**	**48.7**	**45.0**	**45.3**	20.0	29.0	86.4	54.7	72.0	80.1	44.5	81.0	20.0	10.0
160	Ուզբեկստան	**47.0**	**46.5**	**46.0**	**45.8**	**45.8**	**47.5**	**50.5**	**51.9**	15.0	17.0	90.2	67.3	73.1	64.2	63.5	69.8	0.0	10.0
162	Ուկրաինա	**46.9**	**49.3**	**46.3**	**46.1**	**45.8**	**46.4**	**48.8**	**51.0**	20.0	25.0	78.7	28.0	59.3	48.2	78.6	85.8	15.0	30.0
172	Թուրքմենստան	**41.4**	**42.2**	**42.6**	**43.8**	**43.6**	**42.5**	**44.2**	**43.4**	5.0	17.0	94.0	93.5	30.0	20.0	64.2	80.0	0.0	10.0
	Համաշխար-հային միջին	**60.4**	**60.3**	**59.6**	**59.5**	**59.7**	**64.3**	**74.8**	**76.3**	**42.6**	**43.0**	**77.2**	**61.6**	**64.3**	**61.2**	**75.2**	**75.4**	**55.4**	**48.6**

Եվրոպական տարածաշրջանի երկրների տնտեսական ազատության գնահատականները ըստ «Հերիթիջ» հիմնադրամի (2015 թվական)

Աղյուսակ 3

Երկրի դիրքը աշխարհի 178 երկրների շարքում	Դիրքը տարածաշրջանի 43 երկրների շարքում[14]	Երկիրը	2015 թ. գնահատականը	Փոփոխությունը 2014թ. համեմատությամբ	2015 թ. գնահատականն ըստ գործոնների									
					Ընդհանուր դրույքաչափ	Ընկերությունների հարկումը	Սեփականության իրավունքի պաշտպանվածությունը	Կոռուպցիայի ազդեցությունը	Աշխատանքի ազատությունը	Առևտրի ազատությունը	Դրամավարկային քաղաքականությունը	Պետական ծախսերը	Պետական միջամտությունը	Ֆինանսական ազատությունը
5	1	Շվեյցարիա	80.5	-1.1	90.0	85.0	70.3	65.1	78.1	75.3	86.3	90.0	85.0	80.0
8	2	Էստոնիա	76.8	0.9	90.0	68.0	80.6	53.2	81.5	58.7	77.6	88.0	90.0	80.0
9	3	Իռլանդիա	76.6	0.4	85.0	72.0	73.6	45.6	82.1	76.2	83.9	88.0	90.0	70.0
11	4	Դանիա	76.3	0.2	95.0	91.0	39.6	1.8	97.4	92.1	87.6	88.0	90.0	80.0
13	5	Միացյալ Թագ.	75.8	0.9	90.0	76.0	62.9	30.3	91.1	75.6	74.4	88.0	90.0	80.0
15	6	Լիտվա	74.7	1.7	60.0	57.0	92.9	61.3	84.9	62.0	81.2	88.0	80.0	80.0
16	7	Գերմանիա	73.8	0.4	90.0	78.0	60.8	40.1	88.2	51.2	81.5	88.0	90.0	70.0
17	8	Նիդերլանդներ	73.7	-0.5	90.0	83.0	51.8	23.8	84.3	66.3	79.8	88.0	90.0	80.0
19	9	Ֆինլանդիա	73.4	0.0	90.0	89.0	66.4	3.6	92.6	54.8	79.9	88.0	90.0	80.0
21	10	Լյուքսեմբուրգ	73.2	-1.0	90.0	80.0	62.3	42.2	71.3	42.1	80.7	88.0	95.0	80.0
22	11	Վրաստան	73.0	0.4	40.0	49.0	87.2	73.8	88.6	79.9	82.7	88.6	80.0	60.0
23	12	Շվեդիա	72.7	-0.4	90.0	89.0	43.0	19.2	87.9	54.0	85.5	88.0	90.0	80.0
24	13	Չեխիա	72.5	0.3	75.0	48.0	81.5	40.6	68.2	82.9	81.2	88.0	80.0	80.0
26	14	Իսլանդիա	72.0	-0.4	90.0	78.0	72.0	32.6	90.5	62.2	77.0	88.0	70.0	60.0
27	15	Նորվեգիա	71.8	0.9	90.0	86.0	52.1	43.8	92.1	48.2	81.7	89.4	75.0	60.0
30	16	Ավստրիա	71.2	-1.2	90.0	69.0	50.1	19.8	78.0	76.7	80.3	88.0	90.0	70.0
37	17	Լատվիա	69.7	1.0	50.0	53.0	84.4	59.2	82.1	61.5	83.8	88.0	85.0	50.0
40	18	Բելգիա	68.8	-1.1	80.0	75.0	43.6	10.2	90.7	63.7	81.7	88.0	85.0	70.0
42	19	Լեհաստան	68.6	1.6	60.0	60.0	82.1	47.1	67.3	60.4	81.3	88.0	70.0	70.0
45	20	Կիպրոս	67.9	0.3	70.0	63.0	79.5	36.7	79.5	59.6	82.7	88.0	70.0	50.0
49	21	Իսպանիա	67.6	0.4	70.0	59.0	53.1	39.8	77.5	52.6	81.3	88.0	85.0	70.0

[14] *2015թ. ինդեքսում ներգրավված Եվրոպական տարածաշրջանի 45 երկրներից միայն 43 երկրներ են լիովին գնահատվել և վարկանշվել: Անբավարար փվյալների պատճառով Կոսովոյի և Լիխտենշտեյնի համար համախառն ինդեքսի գնահատական և, հետևաբար նաև, երկրի դիրք չի սահմանվել:*

50	**22**	Սլովակիա	67.2	0.8	50.0	47.0	80.8	55.1	69.6	56.5	75.5	88.0	80.0	70.0
52	**23**	Հայաստան	67.1	-1.8	20.0	36.0	84.4	82.8	82.7	64.3	70.6	85.4	75.0	70.0
53	**24**	Մակեդոնիա	67.1	-1.5	35.0	44.0	91.4	65.6	79.2	70.7	79.0	86.2	60.0	60.0
54	**25**	Հունգարիա	66.8	-0.2	55.0	54.0	78.7	25.9	74.5	67.7	79.2	88.0	75.0	70.0
55	**26**	Բուլղարիա	66.8	1.1	30.0	41.0	91.0	64.5	68.5	76.6	83.2	88.0	65.0	60.0
57	**27**	Ռումինիա	66.6	1.1	40.0	43.0	86.9	62.3	69.8	68.6	77.3	88.0	80.0	50.0
58	**28**	Մալթա	66.5	0.1	75.0	56.0	63.1	44.4	61.0	55.6	81.8	88.0	80.0	60.0
63	**29**	Ալբանիա	65.7	-1.2	30.0	31.0	87.2	76.1	70.6	52.9	80.8	87.8	70.0	70.0
64	**30**	Պորտուգալիա	65.3	1.8	70.0	62.0	61.1	28.8	87.5	42.9	82.8	88.0	70.0	60.0
66	**31**	Մոնտենեգրո	64.7	1.1	40.0	44.0	92.6	36.7	77.1	77.5	79.7	84.8	65.0	50.0
70	**32**	Թուրքիա	63.2	-1.7	45.0	50.0	76.1	57.6	61.0	50.2	72.4	84.6	75.0	60.0
73	**33**	Ֆրանսիա	62.5	-1.0	80.0	71.0	47.5	2.5	80.2	43.5	77.5	83.0	70.0	70.0
80	**34**	Իտալիա	61.7	0.8	55.0	43.0	54.2	23.2	71.9	55.4	81.2	88.0	85.0	60.0
81	**35**	Խորվաթիա	61.5	1.1	40.0	48.0	74.9	46.5	55.8	42.8	80.0	87.2	80.0	60.0
88	**36**	Սլովենիա	60.3	-2.4	60.0	57.0	58.1	0.0	81.2	57.1	81.3	88.0	70.0	50.0
90	**37**	Սերբիա	60.0	0.6	45.0	42.0	82.4	27.1	57.8	70.4	72.2	78.2	75.0	50.0
97	**38**	Բոսնիա-Հերց.	59.0	0.6	20.0	42.0	82.9	27.3	53.5	63.4	84.0	87.2	70.0	60.0
111	**39**	Մոլդովա	57.5	0.2	40.0	35.0	85.1	51.8	66.8	40.6	76.1	79.8	50.0	50.0
130	**40**	Հունաստան	54.0	-1.7	40.0	40.0	64.2	0.0	73.3	51.6	77.8	83.0	60.0	50.0
143	**41**	Ռուսաստան	52.1	0.2	20.0	28.0	86.1	57.8	76.3	58.9	63.9	75.0	25.0	30.0
153	**42**	Բելառուս	49.8	-0.3	20.0	29.0	86.4	54.7	72.0	80.1	44.5	81.0	20.0	10.0
162	**43**	Ուկրաինա	46.9	-2.4	20.0	25.0	78.7	28.0	59.3	48.2	78.6	85.8	15.0	30.0
		Տարածաշրջա նային միջին	**67.0**	**0.0**	**60.6**	**57.6**	**71.7**	**39.7**	**76.8**	**61.7**	**78.9**	**86.6**	**74.1**	**62.8**